



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13, Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

-----N-----

**Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն ՈՒ Ղ Ե Ր Ձ**  
**ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ**

Ձերն բարեմաղթանքներով շնորհավորում եմ Կանանց տոնի կապակցությամբ և ցանկանում, որ գարնան սկիզբն ազդարարող այս խորհրդանշական օրվա ողջ տոնականությունը մշտապես ուղեկցի Ձեզ՝ նոր ու դրական լիցքեր հաղորդելով յուրաքանչյուրիդ առօրյային:

Մարտի 8-ի նշանակալի խորհուրդն ու կարևորությունը մեկտեղած՝ պետք է դարձյալ ընդգծենք կնոջ բացառիկ նկարագիրն ու առանցքային մասնակցությունը ինչպես ընտանիքի ամրության, այնպես էլ հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներում հաստատուն հաջողություններ գրանցելու ասպարեզներում:

Հերթական անգամ պետք է բարձր գնահատենք հատկապես հայ կնոջ ինքնատիպ ներաշխարհից բխող բոլոր դրական հատկանիշներն ու ընդգծենք, որ մեր ժողովրդի պատմության էջերում հայ կինն ունի իր առանցքային ու հերոսական ներկայությունը:

Խորին հարգանքի ու մեծարանքի այս խոսքերին զուգահեռ՝ բոլոր կանանց մաղթում եմ հարատև երջանկություն և ամենայն բարիք:

*Հարգանքներով*

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ